


Ա Ր Ա Մ

« Այր հայրենասեր ».

ԽՈՐԵՆ.

Ա.



« Դեռ չէ ծանօթ մեր Հայ անուն,
« Դեռ չէ ծանօթ Հայ քաջութիւն.
« Երթամք Հայեր սովորեցընեմք
« Որ դիւցազանց մեք որդիք եմք:

« Աշխարհ մոռցեր է վեհ լեզուն
« Զոր սովորեցուց Աստուած մարդուն,
« Աշխարհ մոռցեր մեր Նախահայր
« Որ իւր եղաւ ազատարար

« Առէք աղեղ, սուր եւ նիզակ,
« Ծաւալեցէք վիշապ դրօշակ,
« Գունդ գունդ ելէք եւ ռազմ իռազմ,
« Շեփոր զարկէք իսկատերանգմ»:

Բ.

Գոչեց Արամ, — եւ գունդադունդ վաղեցին
Որդիք Հայկայ իձայն քաջաց այն քաջին,
Արօրն ու խօփ թափեցան գէղ գէղ իկրակ,
Եւ շանթաթոս պոռթկացին սուրբ ու նիզակ:

Հայոց դաշտեր որ քան զերկու երկայն դար
Ըզրինդ հովուին լոկ լրսէին հեշտարար,
Յանկարծ իշուինդ մարտագոռոչ շեփորին
Դըզըրդեցան ձորք եւ հովիտք թընդացին:

Փայլուն երկաթ զըրահներէն և՛ իզինուց
Ասես՝ կայծակք թափին իսեւ սեւ ամպուց,
Եւ երբ Հայ գունդք նիզակածօճ գընային՝
Կարծես անտառք իշարժ ելեալ խաղային:

Տեսէք ինչպէս աչքեր ցլան Հայկազանց,
Եռան բազուկք տրօփին թընդան սիրտը անսանձ.
Ո՞վ հաւատայ թէ գոռ վինուորքն այն իխազմ
Առջի անգամն է որ գընան պատերազմ:

Ո՛վ Հայրենեաց սէր, ինչպէս ես զօրաւոր՝
Որ զամենայն յոր մօտենաս՝ փոխես նոր,
Որ երկրագործ ազգ մը վառես վեհ յաւիւն,
Եւ զազգ ընկճեալ՝ յանկարծ փոխես գիւցաղուն:

Երէկ դեռ Հայն թրջէր քրտամբք իւր արտեր,
Երէկ դեռ Հայն բրոնաւորաց տակ հեծէր,
Եւ ահա խորխտ յանկարծ ճակատ ամբառնայ,
Եւ բրոնաւորք իւր գողացին ակամայ:

Վաղեց նիւքար, խրմբեց բանակ առ բանակ,
Հայոց թափոյն դէմ՝ ամբառնալ ամբարտակ,
Բայց ո՞վ կարող ճընշել ըզսէր Հայրենեաց,
Ո՞ր զէնք յաղթել բաւէ ուժոյն երկնազդեաց:

Մի Հայուն դէմ՝ բիւր Մեդացիք կանգնեցան,
Բիւր Մեդացիք մի Հայ բազկէ հընձեցան,
Անմիտք, նոցա էր առաջնորդ բրոնութիւն,
Հայոց վառող սրբախից էր Ազատութիւն:

Ազատութիւն գոչեցին Հայք գողալով,
Զոտքերն իգլուխ բրոնաւորաց գոփելով . . .
Անոյշ քամի ըզդրօշն Հայոց ծածանէր,
Ազատութեան ձայն լեռնէ լեռ ծաւալէր:

Հայ արձագանգք որ ընդ զինուց շառաչման
Մոռցեր էին եւ ըզշրթինդն յաղթութեան,
ԸզՀայ երկնից գըմբէթն իթունդ հանէին,
Եւ չորս գետոց Դրախտին ըզլուր տանէին:

Մեծ աւետիան հասաւ իվեհն Արմաւիր,
Ուր սիրտք հարսանց ու մարց յերկիւղ յուսալիր
Ըսպասէին իւրեանց փեսայն եւ զորդին,
Եւ ասէին. «Արդեօք դառնայր սիրելին»:

Եւ սիրելիքըն Հայուհեաց դառնային,
Նոր յաղթութեան երգս ոգելով խընդագին,
Եւ թըշնամեաց աւարն ոսկի եւ արծաթ
Բերէին յոտըս սիրուհեաց խանդակաթ:

Եւ սիրուհիքըն վաղեցին ընդ առաջ,
Արմենական սօսեաց ճիւղերըն կանաչ
Փափկիկ գըրկօք բարձած բերեալ են պըսակ,
Քաջացն Հայոց պատել ըզգլուխ ու նիղակ:

Մեծ էր այն տօն եւ բերկրութեան աղաղակ,
Զի առաջին էր այն Հայոց յաղթանակ,
Զի առաջին այն օր Հայերն մըանէին
Յաղագաց քաջաց եւ աղատաց իկարգին:

Եւ տիեզերք՝ ջաճ եւ զարմանք խորրախն՝
 «Ո՞վ է այս ազգ, ո՞վ են այս քաջք հարցուցին,
 «Ո՞վ է այս ազգ որ գեււ երէկ կեայր անշուք,
 «Այսօր յանկարծ ելին անյաղժ գիւցազունք»:

Պ.

— Սորա որդիք են Արամայ,
 Պատասխանէր Մեղացին,
 Սորա որդիք են այն քաջին
 Որ զմեզ զընկճողքս ընկճեաց գերի:
 Եւ ըզհրակայն մեր քաջ Նիւբար
 Շամիրեց նա ողջ ողջ յիւր նիզակ,
 Եւ յազլծուծեան իւր նըշանակ
 Դամեց գոռոզ նա յԱրմաւիր:

— Սորա որդիք են Արամայ,
 Պատասխանէր Ասորին,
 Սորա որդիք են այն քաջին
 Որ զմեր բրաւ ազգ անորդի.
 Որ զմեր ահեղ աստուած Բարշամ
 Մէկ հարուածով հար սատակեց,
 Շանց կերակուր ըզգին նետեց
 Եւ ըզհոգին իսեւ գըծոխք:

— Սորա որդիք են Արամայ,
 Պատասխանէր միջերկրեայն,
 Սորա որդիք են քաջին այն
 Որ զմեզ հընձեց իբր ըզխոտ.
 Եւ Պայապիս հուժկու Տիտան
 Իսեւ քաջին այն սարսափաւ
 Հաղիւ ծովուն իժայռս փախաւ
 Զերգ յառիւծէն փախչի այժեամ:

— Սորա որդիք են Արամայ,
 Պատասխանէր Պանտացին,
 Սորա որդիք են այն քաջին
 Զոր մեր հայրեր ոչ գիտացին.
 Եկաւ փրբկեց սա իւր սըրով
 Բընաւորաց ըզմեզ ձեռքէն.
 Կապաղովկիոյ ետ բարս օրէն,
 Եւ ըզլըրթիչ Հայոց լեզուն:

— Սոքա որդիք են Արամայ,
 Պատասխանէր Բելորդին,
 Սոքա որդիք են այն քաջին
 Յորմէ գողաց մեծն այն նինոս,
 Պըսակ ղըրկեց իրեն ընծայ,
 Զի մի գուցէ նա կուռ սրբով
 Ըղթագ գըլխոյն պահանջելով,
 Ըղկեանս ընդ թագն յախըշտակէր:

— Սոքա որդիք են Արամայ,
 Պատասխանեն գողագին,
 Սոքա որդիք են հըսկային
 Ում փոքր եկաւ մեծն Հայաստան.
 Զարկաւ փըլցուց լեռներն ու ժայռ,
 Անցաւ սուրաց, եւ խրոխտ զիւր տէգ
 ԻՍեւ ծովուն տընկեց եզերք,
 Գոչեց. «Այս է Հայոց սահման»:

Դ.

Այո՛, քո որդիք եմք ազատերամ,
 Ո՛վ հայր հայրենեաց դիւցայնդթ Արամ,
 Այո՛ քո որդիք, եւ ըզգամք իսկ բուն
 Թէ քանի պարծանք է մեզ քոյդ Անուն.

Ըզգամք թէ զո՛ր պարտք որդւոցըս վերայ
 Արկանէ անուն քոյին դիւցազնեայ,
 Ըզգամք որ թէ քո ժառանգեմք ըզփառս,
 Հարկ է ժառանգեմք նաեւ ըզքո՛ բարս:

Հարկ է որ քո պէս սիրեմք մեր լեզուն,
 Եւ տամք պատկառել իմեր վեհ Անուն...
 Հարկ է որ քո պէս սիրեմք Հայրենիս,
 Եւ նըմա զոհեմք ըզկեանս եւ զոգիս....

Զի մի երբ օտար ազգեր շըրջակայ
 Կոչեն գեռ ըզմեզ «Որդիս Արամայ»,
 Դու յամպոց բարձանց նայիս մեր վերայ,
 Եւ գոչես. «Որդիք... չգիտեմ ըզգոսայ»:

